«ՇԻՐԱԿԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ» ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Աշխարհագրության ուսուցման նորագույն մեթոդները և դրանց կիրառման հնարավորությունները

ԿԱՏԱՐՈՂ՝ Մայիսյանի միջնակարգ դպրոցի ուսուցիչ՝ Համլետ Հարությունյան

ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝ Աշխարհագրական գիտությունների թեկնածու-դոցենտ՝ Արմեն Ներսիսյան

ԳՅՈՒՄՐԻ 2022

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կրթական բարեփոխումների ժամանակակից փուլում առավել ակտուալ է դարձել աշխարհագրության դասավանդման մեթոդների մշտական կատարելագործումը: Աշխարհագրությունը, լինելով գերզգայուն գիտություն, կյանքում և աշխարհում կատարվող փոփոխությունների նկատմամբ, մշտապես զարգանում ու փոփոխվում է: Բնականաբար փոխվում են նաև դպրոցում նրա մատուցման սկզբունքները, աշխարհագրություն առարկայի ծրագրերը, դասագրքերը, դասավանդման մեթոդական մոտեցումներն ու լուծումները:

Աշխարհագրության ուսուցման մեթոդները բավականին բազմազան են, առաջնային դրանց ճիշտ կիրառումն է, որպեսզի ունենանք հաջողություն: Հակառակ դեպքում հաջողության բացակայությունը պայմանավորված է ոչ թե աշակերտի բնածին սակավ ընդունակություններով, այլ ուսուցչի կողմից կիրառվող ոչ արդյունավետ աշխատաձևերով, որոնք ըստ էության, հաղորդում են գիտելիք, բայց չեն սովորեցնում ինքնուրույն սովորել:

Կատարվում է աշխարհագրության ուսուցման մեթոդների դասակարգում, որտեղ շատ պարզ երևում է դրանց գործնական կիրառությունը և նշանակությունը:

Աշխարհագրության ուսուցման մեթոդներից՝ ըստ գիտելիքի ստացման աղբյուրի առավել կարևորվում է խոսքային մեթոդը: Խոսքը մարդկային շփման գլխավոր միջոցն է: Առանց նրա հնարավոր չէ նաև ուսուցման գործընթացը: Ուսուցման խոսքային մեթոդները նույնքան հին են, որքան և ինքը՝ ուսուցումը:

Դիտազննական մեթոդը ուսուցչի և աշակերտի փոխկապակցված գործնեության համակարգված եղանակ է, որն իրականացվում է ցուցադրության միջոցով:

Օրինակ դիտազննական մեթոդների շարքին են պատկանում ուսումնական նկարների, ցուցադրական աղյուսակների, էկրանային պարագաների, ուսուցողական կամ մանկավարժական նկարների, քարտեզների և մոդելների կիրառման մեթոդները:

Գործնական մեթոդները ուսուցչի ու աշակերտի փոխկապակցված գործողություններ են, որոնք ունեն իրենց առանձնահատկությունները.

ուսուցիչը ձևակերպում է խնդիրը ու կազմակերպում աշակերտի գործունեությունը, որն ուղղված է քարտեզի, նկարի, մոդելի կամ այլ օբյեկտի հետ նախատեսվող աշխատանքի եղանակների յուրացմանը։

ՈՒսուցիչը առաջադրում է խնդիր, որի լուծման համար պետք է օգտվել քարտեզից, նկարից, մոդելից կամ այլ օբյեկտից՝ կիրառելով աշխատանքի՝ արդեն իսկ յուրացված եղանակները, ձեռք բերել նոր գիտելիք։

Գործնական մեթոդը ուսուցչի և աշակերտի փոխկապակցված գործնեության համակարգված եղանակ է, որն իրականացվում է սովորողի ինքնուրույն ակտիվ գործողության միջոցով։

Աշխարհագրական կրթությանը ներկայացվող այս նոր պահանջները ենթադրում են դասավանդման նկատմամբ ցուցաբերված մոտեցումների սկզբունքային փոփոխություններ, որոնք իրենց հերթին անրադառնում են աշխարհագրության դասավանդման մեթոդիկայի հայեցակարգային կառուցվածքի վրա։ Այսօր անհրաժեշտ է արագ և ճկուն արձագանքնել ու ուշադրության կենտրոնում պահել բոլոր ընթացիք փոփոխությունները, որոնք կատարվում են կրթական համակարգում և վերաբերում են մասնավորապես աշխարհագրություն առարկային։

ԳԼՈՒԽ 1

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԻՐԱՌՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.1 ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Հոգեբանների և մանկավարժների հետազոտություններն ապացուցում են, որ ուսուցման մեջ հաջողության բացակայությունը պայմանավորված է ոչ թե աշակերտի բնածին սակավ ընդունակություններով, այլ ուսուցչի կողմից կիրառվող ոչ արդյունավետ աշխատաձևերով, որոնք, ըստ էության, հաղորդում են գիտելիք, բայց չեն սովորեցնում ինքնուրույն սովորել: Ուսուցման գործընթացում գիտելիքի փոխանցման ուղիները համարվում են ուսուցման մեթոդներ:

Մեթոդը հունարեն **metodos** բառի հայերեն թարգմանությունն է, որը նշանակում է **նպատակին հասնելու եղանակ, ուղի, որոշակի կարգավորված գործունեություն:**

Դիդակտիկան, ուսուցման մեթոդ ասելով, հասկանում է այն **եղանակները, ուղիները, հնարներն ու ձևերը,** որոնցով զինվելով՝ սովորողները ուսուցչի ղեկավարությամբ ձեռք են բերում **գիտելիքներ, հմտություններ, կարողություններ, որոնք ձևավորում են նրանց աշխարհահայացքը, զարգացնում ճանաչողական ունակություններն ու գործնական հմտությունները:** Ուսուցման մեթոդները ուսումնական գործընթացի կարևորագույն բաղադրիչներից են:

Մեծ մանկավարժ-գիտնական Ի. Պ. Պոդլասին նշում է, որ «Մեթոդը ուսուցման գործընթացի միջուկն է, որը կապող օղակ է նախատեսված նպատակի և վերջնական արդյունքի միջև»: Նրա դերը «նպատակներ-բովանդակություն-մեթոդներ-ձևեր-ուսուցման միջոցներ» համակարգում համարվում է որոշիչ: Դիդակտիկայում տրվել է ուսուցման մեթոդ հասկացության առավել լիարժեք ձևակերպումը, այն է՝ **«Ուսուցման մեթոդը ուսուցչի և աշակերտի փոխկապակցված գործունեության համակարգված եղանակ է ուղղված կրթական նպատակների իրականացմանը»:** Այդ գործունեությունը արտահայտվում է իմացության աղբյուրների, տրամաբանական հնարքների, սովորողների

իմացական ինքնագործունեության տեսակների և ուսուցչի կողմից ուսուցման պրոցեսի ղեկավարման եղանակների կիրառման մեջ:

Այսպիսով **«ուսուցման մոթոդ»** հասկացության բնորոշ հատկանիշներն են՝ **նպատակը,** որը որոշվում է ուսուցչի և աշակերտի գործողությունների համակարգը (օր՝ աշխարհագրական պատկերացման ձևավորում), **միջոցները,** որոնց օգնությամբ իրագործվում է նպատակը (օր՝ նկարների ցուցադրում), և **օբյեկտը,** որին ուղղված է գործողությունների համակարգը (օր՝ գիտելիք լեռնաշղթայի վերաբերյալ):

Ուսուման մեթոդի ձևակերպման մեջ առանձնացվում է երկու կողմ՝ **արտաքին** (օբյեկտային) և **ներքին** (սուբյեկտային):

Արտաքին կողմը (օբյեկտային ասպեկտ) արտահայտվում է ուսուցչի գործողություններում, երբ նա ընտրում է գիտելիքի ձեռքբերման աղբյուրը, որով պետք է կազմակերպի աշակերտների աշխատանքը, որն արտահայտվում է մեթոդների և ուսումնական նյութի բովանդակության կապի մեջ: Օրինակ՝ եթե ուսուցիչը նյութը շարադրում է բանավոր, ապա սովորողների համար գիտելիքների աղբյուրը նրա խոսքն է, իսկ խոսքի արտահայտման ձևը՝ պատմում, զրույց, դասախոսություն և այլն, մեթոդի արտաքին կողմն է:

Ներքին կողմը (սուբյեկտային ասպեկտ) աշակերտների կողմից ուսումնական տեղեկության մտավոր վերլուծությունն է, գիտելիքի տրամաբանական կառուցվածքի գիտակցումն ու իմաստավորումը: Այս գործունեությունը դիտարկելի չէ, քանի որ կատարվում է մտավոր գործողությունների միջոցով: Ուսուցիչը այդ մասին տեղեկանում է միայն արդյունքների ստուգման պահին: Սուբյեկտային ասպեկտը մեծապես կախված է աշակերտի պատրաստվածությունից, ուսուցչի մասնագիտական վարպետությունից ու անձնային որակներից:

Ուսուցման օբյեկտային և սուբյեկտային ասպեկտները պայմանավորում են ուսուցման մեթոդի **բինար** կամ երկարգասիք բնույթը:

Մեթոդի բաղադրամաս է համարվում **հնարը:** Մեթոդական հնարը ուսուցման գործընթացի փոքրագույն կառուցվածքային միավորն է: Ուսուցման տարբեր

մեթոդներում կիրառվում է հնարների տարբեր քանակ: Որքան ավելի բարդ է մեթոդը, այնքան ավելի շատ են նրանում պարունակվող հնարները, հետևաբար առավել բարձր է ակտիվացնող ներգործությունը:

ԳԼՈՒԽ 2

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

2.1 ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

Դիդակտիկայում տարբերակում են մեթոդների երեք խոշոր խմբեր

1.1. աշակերտների ուսումնական գործունեության խթանման մեթոդներ

1.2. ուսումնաիմացական գործունեության կազմակերպման մեթոդներ

1.3. Ուսումնաիմացական գործունեության արդյունքների վերահսկաման մեթոդներ:

Առարկայական ուսուցման մեթոդիկաներում հիմնական ուշադրությունը կենտրոնացվում է մեթոդների երկրորդ խմբին՝ ուսումնաիմացական գործունեության կազմակերպման մեթոդներին, որոնք դասակարգում են հետևյալ հիմքերով՝

2.1. ըստ գիտելիքի ստացման աղբյուրի

2.2. ըստ սովորողների իմացական գործունեության բնույթի

2.3. ըստ ուսումնական նյութի պարզաբանման տրամաբանության (ինդուկտիվ և դեդուկտիվ մեթոդներ)

2.4. ըստ սովորողներ ինքնուրույնության աստիճանի:

Աշխարհագրության ուսուցման մեթոդիկայում գոյություն ունի և կիրառվում է ուսուցման մեթոդների երկու դասակարգում՝

3.1. ըստ գիտելիքի ստացման աղբյուրի

3.2. ըստ սովորողների իմացական գործունեության բնույթի, որը պայմանավորված է գիտելիքի յուրացման տարբեր մակարդակներով:

Երկու դասակարգումների գոյությունը արտացոլում է մեթոդների բազմաբնույթ էությունը, դրանց արտաքին և ներքին կողմերը:

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ՝ ԸՍՏ ԳԻՏԵԼԻՔԻ ՍՏԱՑՄԱՆ



2.2 Աշխարհագրության ուսուցման խոսքային մեթոդները:

Աշխարհագրության ուսուցման մեթոդներից՝ ըստ գիտելիքի ստացման աղբյուրի առավել կարևորվում է խոսքային մեթոդը: Խոսքը մարդկային շփման գլխավոր միջոցն է: Առանց նրա հնարավոր չէ նաև ուսուցման գործընթացը: Ուսուցման խոսքային մեթոդները նույնքան հին են, որքան և ինքը՝ ուսուցումը:

Խոսքային մեթոդը ուսուցչի և աշակերտի փոխկապակցված գործնեության համակարգված եղանակ է, որն իրականացվում է խոսքի միջոցով:

Գոյություն ունեն բանավոր և գրավոր (մտքի արտահայտումը գրավոր շարադրանքի եղանակով) խոսքային մեթոդներ: Բանավոր խոսքային մեթոդները տարբերվում են նյութի բովանդակության շարադրման ձևով: Այն կարող է կրել մենախոսության բնույթ՝ ուսուցչի պատմումը, բացատրությունը, դպրոցական դասախոսությունը, աշխարհագրական տեղեկատվական աղբյուրի հետ աշխատելու հնարներին ծանոթացումը: Կարող է կրել նաև երկխոսության բնույթ՝ զրույց աշակերտների հետ, աշխատանք դասագրքում զետեղված հարցերի և առաջադրանքների հետ: Ուսուցչի պատկերավոր և հուզական խոսքը մեծ ազդեցություն է թողնում սովորողի խոսքի տրամաբանության ձևավորման և զարգացման վրա: Աշխարհագրության որոշ ուսուցիչներ խուսափում են պատմելուց՝ նախընտրելով զրույցը՝ իբրև առավել ակտիվ մեթոդ: Սակայն ուսուցչի մենախոսությունը ընկալվում է սովորողի կողմից իբրև մտքի կանոնավոր, տրամաբանական կուռ կառուցվածք ունեցող շարադրանքի նմուշ, ուստի ուսուցչի խոսքն անփոխարինելի դեր ունի ողջ կրթական գործընթացում:

Խոսքային մեթոդների զարգացման գլխավոր հիմնական ուղղությունը դրանց ներուժի առավելագույն օգտագործումն է սովորողների մտավոր գործնեության կազմակերպման համար: Դրան հասնելու համար անհրաժեշտ է աշակերտներին սովորեցնել տրամաբանական գործողությունների եղանակներին՝ վերլուծություն, համադրում, համեմատում, համակարգում, ընդհանրացում: Խոսքային մեթոդներն անհրաժեշտ են որպեսզի աշակերտների մոտ ձևավորվեն հետևյալ կարողությունները՝ կատարել դատողություն, արտահայտել սեփական միտքը, պատմել դիտարկված երևույթների մասին, կիսվել տպավորություններով և այլն:

2.3 Աշխարհագրության ուսուցման դիտազննական մեթոդները

Այս խմբի մեթոդները տարբերվում են զննականության միջոցների կիրառմամբ: Դիտազննական մեթոդներում գիտելիքների աղբյուրներն են հանդիսանում տարբեր ուսումնական պարագաներ:

Դիտազննական մեթոդը ուսուցչի և աշակերտի փոխկապակցված գործնեության համակարգված եղանակ է, որն իրականացվում է ցուցադրության միջոցով:

Դիտազննական մեթոդների շարքին են պատկանում ուսումնական նկարների, ցուցադրական աղյուսակների, էկրանային պարագաների, ուսուցողական կամ մանկավարժական նկարների, քարտեզների և մոդելների կիրառման մեթոդները: Դիտազննական մեթոդների հիմնական գործառույթը ուսումնասիրվող օբյեկտի կամ երևույթի պատկերավոր կերպարի ստեղծումն է գիտակցության մեջ, աշխարհագրական օբյեկտների վերաբերյալ պատկերացումների ձևավորումը (օրինակ՝ աէրոֆոտոնկարի միջոցով պատկերացում ենք կազմում ծովային հոսանքի վերաբերյալ): Ուսուցիչը ցուցադրում է դիտազննական պարագաները, կազմակերպում է դրա ընկալումը աշակերտի կողմից, ղեկավարում է վերջիններիս մտավոր գործունեությունը, սովորեցնում աշխարհագրական իմֆորմացիայի ստացման նմանատիպ աղբյուրների հետ աշխատելու եղանակները: Բազմատեսակ դիտազննական միջոցների ներկրումը ուսուցման գործընթաց նպաստում է ուսումնական նյութի առավել խոր ընկալմանը: Աշխարհագրության ուսուցման գործընթացում դիտազննական մեթոդները առավել կարևոր են, քանզի հիմնված են զգայական իմացության վրա, իսկ զգայական իմացությունը ժամանակային առումով նախորդում է ռացիոնալ իմացությանը: Սակայն զգայական իմացությունը լիովին ինքնուրույն հանդես չի գալիս, այն ուղեկցվում է խոսքով (օր.՝ «օղակաձև կորային կղզի» հասկացությունը ձևավորում է նկարի ցուցադրման հիման վրա, որն ուղեկցվում է բանավոր բացատրությամբ, այսինքն կղզիների այս տեսակի մասին հասկացությունը ձևավորվում է պատկերացման հիման վրա): Տվյալ դեպքում դիտազննական մեթոդները հենք են հանդիսանում խոսքային մեթոդների համար: Աշխարհագրության ուսուցման մեթոդիկայում կա «ոսկյա օրենք»՝ գիտելիքի ստացման յուրաքանչյուր նոր աղբյուր սկզբում պետք է

լինի հատուկ ուսումնասիրման օբյեկտ: Օրինակ՝ ուսուցման գործընթացում հաճախ բարդություններ են առաջանում սխեմաների հետ աշխատելու ընթացքում, սովորողները դժվար են հասկանում սխեմայի կառուցվածքն ու նրանում երևույթի պատկերման եղանակները, այդ իսկ պատճառով սխեմայի դիդակտիկական հնարավորությունները լիարժեք չեն իրացվում:

2.4 Աշխարհագրության ուսուցման գործնական մեթոդները: Գործնական աշխատանքներ:

Այս մեթոդներում գիտելիքների ստացման գլխավոր աղբյուր են հանդիսանում աշխարհագրական իրականությունը (բնական և հասարակական) ու նրա մոդելները (քարտեզներ, պրոֆիլներ, գրաֆիկներ, մանրակերտեր և այլն):

Գործնական մեթոդները ուսուցչի ու աշակերտի փոխկապակցված գործողություններ են, որոնք ունեն իրենց առանձնահատկությունները.

ուսուցիչը ձևակերպում է խնդիրը ու կազմակերպում աշակերտի գործունեությունը, որն ուղղված է քարտեզի, նկարի, մոդելի կամ այլ օբյեկտի հետ նախատեսվող աշխատանքի եղանակների յուրացմանը (օր.՝ ծանոթացնել քարտեզի «գունային լեզվին», որից հետո որոշել տարբեր վայրերի ռելիեֆի ձևերը՝ ըստ գունային ֆոնի):

ուսուցիչը առաջադրում է խնդիր, որի լուծման համար պետք է օգտվել քարտեզից, նկարից, մոդելից կամ այլ օբյեկտից՝ կիրառելով աշխատանքի՝ արդեն իսկ յուրացված եղանակները, ձեռք բերել նոր գիտելիք (օր.՝ քարտեզի «գունային լեզվի» և «գունային սանդղակի» օգնությամբ որոշել երկրի մակերևույթի տարբեր մասերի բացարձակ և հարաբերական բարձրությունները):

Գործնական մեթոդը ուսուցչի և աշակերտի փոխկապակցված գործնեության համակարգված եղանակ է, որն իրականացվում է սովորողի ինքնուրույն ակտիվ գործողության միջոցով:

Այսպիսով՝գործնական մեթոդների էությունն այն է, որ ուսուցչի օգնությամբ աշակերտները սովորեն ձեռք բերել նոր գիտելիք ուսուցման միջոցներից (քարտեզից, ֆիլմերից):

Գործնական մեթոդները մեծ դեր են խաղում այնպիսի կարողությունների ձևավորման գործում, որոնք անհրաժեշտ են սովորողի ինքնուրույն իմացական գործունեության զարգացման համար և կիրառելի են առօրյա կյանքում, օրինակ՝ թվային տվյալների վերլուծությունը, կառուցողական ունակությունները, ուսուցման տեխնիկական միջոցների հետ աշխատելու և դրանցից գիտելիք քաղելու կարողությունը և այլն: Գործնական մեթոդների շարքին են պատկանում

օբյեկտների ու երևույթների դիտարկումը բնության մեջ, արտադրական և ոչ արտադրական ոլորտի ձեռնարկություններում: Այս մեթոդները նպաստում են աշխարհագրական գիտելիքների կիրառմանը հասարակական կյանքում և աշխատանքի տարբեր ոլորտներում (մթնոլորտային երևույթների կանխատեսում, հեղեղատների առաջացման կանխատեսում, ջրամբարների աղտոտման դեմ պայքարի ուղիների որոնում և այլն): Գործնական մեթոդների իրացման հարցում մեծ դեր ունեն գործնական աշխատանքները, որոնք կատարվում են դասարանում, տեղանքում, արտադրկան և ոչ արտադրական ոլորտի ձեռնարկություններում: Գործնական աշխատանքները աշակերտի ուսուցման կազմակերպման ձև է: Ուսուցողական գործնական աշխատանքները կատարվում են ուսուցչի ղեկավարությամբ: Ուսուցիչը բացատրում է գործողությունների հերթականությունը, ցույց է տալիս կատարման օրինակը և հանձնարարում առաջադրանքը, որը ենթադրում է գործողության վերարտադրումն ու մտապահումը, այսինքն ուղղված է գործողության եղանակի յուրացմանն ու կարողության ձևավորմանը (օրինակ՝ «կետի աշխարհագրական կոորդինատների» որոշումը: Գտնել Ամստերդամի, Տորոնտոյի, Մելբուրնի աշխարհագրական լայնությունները): Վարժեցնող գործնական աշխատանքները ուղղված են կարողության ամրապնդմանն ու կատարելագործմանը, ինչը կհանգեցնի հմտության ձևավորմանը, այսինքն գործողության ավտոմատացմանը (օր.՝ ինքնուրույն ընտրել Աֆրիկա մայրցամաքից երեք տեղանուն և որոշել դրանց աշխարհագրական կոորդինատները, որից հետո կրկնել նույն առաջադրանքը մյուս մայրցամաքների հետ): Այսինքն, ուսուցիչն առաջադրում է կետի աշխարհագրական կոորդինատների որոշմանն ուղված տարատեսակ աշխատանքներ, որոնք պահանջում են յուրացված կարողության բազմակի կրիկնություն և հանգեցնում հմտության ձևավորման: Ամփոփիչ գործնական աշխատանքները ուղղված են կարողությունների ու հմտությունների յուրացման որակի ստուգմանն ու դրանց կիրառմանը նոր պայմաններում (օր.՝ նավը գտնվում է հվ. լայն. 40° և արվ. երկ. 15° կետում և օգնություն է խնդրում, մոտակա երկու նավերը գտնվում են՝ 1-ինը հվ. լայն. 20° և արմ. երկ. 5°-ում, իսկ 2-րդը՝ հվ. լայն.

40° և արվ. երկ. 90°-ում, հարց. ո՞ր նավը ավելի շուտ կհասնի օգնության: Աշակերտի գործողությունը՝ գտնել նավերի տեղը քարտեզի օգնությամբ, չափել հեռավորությունը, արտահայտել կմ-ով կամ ծովային մղոնով և պատասխանել հարցին):

Գործնական մեթոդների կիրառումը արդյունավետ է միայն այն դեպքում, երբ սովորողները տիրապետում են ուսումնական աշխատանքի այնպիսի հնարներին, որոնք ընկած են աշխարհագրական կարողությունների ու հմտությունների հիմքում:

2.5 ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ՝ ԸՍՏ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԻՄԱՑԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒՅԹԻ

Զարգացնող ուսուցման գաղափարներն իրականացնելու նպատակով 20-րդ դարի 70-ական թթ Լեռների ու Սկատկինի կողմից մշակվեց և ներդրվեց ուսուցման մեթոդների նոր դասակարգում, որը հաշվի է առնում աշակերտների իմացական գործունեության բնույթը տարբեր տարիքային խմբերում: Այդ գաղափարները այսօր լայն կիրառում են ստացել դպրոցում և հիմք են հանդիսացել ուսուցման գործընթացի կազմակերպման համար:

Աշխարհագրության ուսուցման մեթոդիկայում, այս դասակարգման համաձայն, մեթոդները միավորվում են երկու մեծ խմբերում՝

- Բացատրացուցադրական մեթոդների խումբ՝ բացատրացուցադրական և ռեպրուդուկտիվ /վերհիշական/ մեթոդներ,
- Ստեղծագործական մեթոդների խումբ՝ պրոբլեմային շարադրանքի, մասնակի-որոնողական և հետազոտական մեթոդներ:

<u>Բացադրացուցադրական</u> մեթոդը կիրառվում է ուսուցչի կողմից ուսումնական իմֆորմացիայի փոխանցման ընթացքում: Ուսուցիչը բացատրում է, իսկ աշակերտը մտապահում և վերարտադրում է գիտելիքը այն տեսքով, ինչպես որ մատուցել է ուսուցիչը: Մեթոդի շրջանակներում ուսուցման առավել ընդունված մեթոդական հնարներն են՝ բացատրությունը, պատմելը (քարտեզի ցուցադրությամբ), բարձրաձայն ընթերցումը, դասագրքի նյութի վերապատմումը, աղյուսակային տվյալների որոնումը: Այս մեթոդի օգնությամբ ուսուցիչը ձևավորում է սովորողների գիտելիքների հիմնական պաշարը, որի հիմքի վրա հետագայում կազմակերպվում են ինքնուրույն աշխատանքները: Ուսուցիչը փոխանցում է գիտելիքը, սովորողները յուրացնում են տեղեկությունը՝ լսում են, կարդում են, դիտում են, մտապահում են, որից հետո պարզ վերարտադրում են ընկալվածը: Բացատրացուցադրական մեթոդը գիտելիքների փոխանցման ամենադյուրին մեթոդն է, իսկ ժամանակի իմաստով՝ առավել տնտեսողը, քանի որ կարճ ժամանակահատվածում հնարավոր է փոխանցել գիտելիքների մեծ ծավալ: Տնտեսական և սոցիալական աշխարհագրության շրջանակներում այս մեթոդը

կիրառվում է ամբողջական թեմաների համալիր ներկայացման նպատակով, օրինակ՝ «Հայաստանի Հանրապետության տնտեսաաշխարհագրական բնութագիրը», «Հայաստանի Հանրապետության արտաքին տնտեսական կապերը» և այլն: Ուսումնական տեղեկատվությունը կարելի է փոխանցել ոչ միայն բանավոր խոսքի, այլև տեխնիկական միջոցների օգնությամբ: Ժամանակակից դպրոցի ուսումնական աշխատանքներում առաջնայնությունը տրվում է բացատրությանը՝ փոքր-ինչ նվազեցնելով պատմելու և նկարագրելու դերը: Բացատրացուցադրական մեթոդը կիրառվում է ոչ միայն տեսական գիտելիքի փոխանցման նպատակով, այլև նրա միջոցով ձևավորվում են աշխարհագրության ուսուցման մեջ կիրառվող բազմաթիվ հնարներ՝ քարտեզի ընթերցում, գծակարգի վերլուծում, աշխարհագրական նկարագրության և բնութագրի կազմում և այլն: Բացատրացուցադրական մեթոդը նպատակահարմար է լայնորեն կիրառել նաև ցածր դասարաններում:

Վերհիշական կամ ռեպրոդուկտիվ մեթոդի նպատակը գիտելիքի կրկնության, ամրապնդման և վերահսկման իրականացումն է, իսկ քանի որ վերհիշել կամ վերծանել կարելի է միայն այն, ինչ լսել, տեսել, կարդացել ես, ապա այս մեթոդը կիրառվում է բացատրացուցադրական մեթոդի հենքի վրա: Վերհիշական մեթոդի գլխավոր հատկանիշը գործնեության եղանակի կրկնությունն ու վերարտադրությունն է ուսուցչի հանձնարարությամբ ըստ որոշակի պլանի կամ նմուշի: Վերհիշական մեթոդը ձևավորում և ամրապնդում է աշխարհագրական հատուկ կարողություններն ու հմտությունները: Ուսուցչի դերը, այս մեթոդի շրջանակներում այն է, որ, հանձնարարելով առաջադրանքը, կարողանա կազմակերպել աշակերտների կողմից գիտելիքի կիրառման և նյութի կրկնության բազմատեսակ եղանակները: Վերհիշական մեթոդի էությունն է սովորեցնել աշակերտներին կիրառել ստացվող նոր գիտելիքներն արդեն ծանոթ ուսումնական իրավիճակում (աշխատանք տիպային պլանի հետ) կամ նոր գիտելիք ձեռք բերելու համար: Վերհիշական մեթոդներում մեծ տեղ է գրավում աշխատանքը տիպային պլանի և քարտեզի հետ: Սովորողներին տրվում է գետերի, լճերի,

լեռնաշխարհների, բնական զոնաների, առանձին պետությունների բնութագրերի պլանը:

Տիպային պլան: Գետի բնութագրում:

Դասարանից դասարան տիպային պլանները բարդեցվում են: Օրինակ՝ եթե 6-րդ դասարանում գետի բնութագիրը պարունակում է հետևյալ հարցերը՝

գետի անվանում,

գետի հոսքի ուղղություն,

գետի ակունք (աշխարհագրական կոորդինատներ, տեղանքի անվանում),

տեղանքի բնույթը (հարթավայր, լեռներ և այլն),

վտակներ,

գետաբերան (աշխարհագրական կոորդինատներ, տեղանքի անվանում),

ապա 7-րդ դասարանում այս տիպային պլանում ավելանում են նաև հետևյալ հարցերը՝

կլիմայի ազդեցությունը գետային ռեժիմի վրա,

գետի տնտեսական նշանակությունը և այլն:

Բարձր դասարաններում այս հարցերին կարող են ավելանալ նաև ուրիշ հարցեր:

Վերջին ժամանակներում աշխարհագրության ուսուցման ընթացքում աշակերտների իմացական հետաքրքրասիրության զարգացման նպատակով դպրոցական ուսուցման շրջանակներում ակտիվորեն սկսվեց կիրառվել <u>պրոբլեմային ուսուցման մեթոդը</u>: Այս հարցով խորապես զբաղվել է Մ.Ի. Մախմուտովը և ստեղծել մի ստվարածավալ աշխատություն, որը կոչվել է «Պրոբլեմնոյե օբուչենիե»: Պրոբլեմային ուսուցումը յուրահատուկ տեղ է զբաղեցնում դպրոցական կրթության մեջ և ներառում է մի շարք մեթոդներ՝ պրոբլեմային շարադրանքի, մասնակի-որոնողական և հետազոտական:

Սովորողների առջև դրվում է խնդիր, որոնք նրանք պետք է լուծեն ինքնուրույն կամ ուսուցչի օգնությամբ, գտնեն լուծման եղանակները կամ արդեն ունեցած գիտելիքների կիրառման եղանակները նոր պայմաններում: Հակասությունները արդեն ունեցած գիտելիքների և նոր հանձնարարությունների միջև պետք է

հանձնարարեն ինքնուրույն մտային և գործնական գործողություններով, որոնք կունենան ստեղծագործական բնույթ: Ստեղծվում պրոբլեմային իրավիճակ:

Պրոբլեմային իրավիճակ: Պրոբլեմային իրավիճակը հոգեբանական իրավիճակ է, որում աշակերտը մտավոր բարդություն է ունենում ուսումնական խնդրի լուծման ճանապարհին: Պրոբլեմային իրավիճակաը սովորաբար ստեղծում է ուսուցիչը (բայց հնարավոր է, որ այն ստեղծի նաև սովորողը իր հարցադրումներով): Աշխարհագրության ուսուցման շրջանակներում առանձնացվում է պրոբլեմային իրավիճակի ստեղծման 3 տեսակ (ըստ Ա.Մ. Մատյուշկինի):

Առաջին տեսակ՝ իրավիճակ, երբ խնդրի լուծման համար գիտելիքներն անբավարար են, կամ խնդրի պայմանները բովանդակում են ոչ լիարժեք տեղեկություն:

Երկրորդ տեսակ՝ երբ առկա գիտելիքներից ընտրվում են նրանք, որոնք անհրաժեշտ են խնդրի լուծման համար:

Երրորդ տեսակ՝ երբ աշակերտները պետք է գիտելիքները կիրառել նոր իրավիճակում:

<u>Պրոբլեմային շարադրանքի մեթոդ</u>: Մեթոդի նպատակն է ցույց տալ աշակերտին իմացության բարդ ուղին, ճշմարտության պարզաբանման ճանապարհը որևէ բարդ հարցի ապացուցողական լուծման նմուշը:

<u>Մասնակի-որոնողական մեթոդ</u>: Այս մեթոդի նպատակն է աստիճանաբար մոտեցնել սովորողին ստեղծագործական աշխատանքին:

<u>Հետազոտական մեթոդ</u>: Այս մեթոդի կիրառման շրջանակներում աշակերտներն ինքնուրույն ուսումնասիրում են իրենց համար լիովին նոր նյութը ինքնուրույն:

Հետազոտական մեթոդն անփոխարինելի է «ռեալ» պրոբլեմային ուսուցման պայմաններում, որը հաշվի է առնում աշակերտների անմիջական հետաքրքրություններն ու պահանջմունքները ռեալ ուսումնական պրոբլեմը պետք է ելնի աշակերտի պահանջմունքները և համապատասխանի նրա պատրաստվածության մակարդակին: Ն. Գրեյվզի աշխատությունում բերված է հետևյալ օրինակը, «մոտակա հանգստյան օրերին նախատեսված է արշավ, մեզ

անհրաժեշտ է իմանալ թե ի՞նչ եղանակ է սպասվում այդ օրերին, որպեսզի որոշենք, թե ինչ հագուստ և հանդերձանք է մեզ հարկավոր: Դասարանը պետք է բաժանվի խմբերի, որոնք կմշակեն եղանակի կանխատեսումը և կտան ռեալ առաջարկներ»:

2.6 ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Ուսուցման մեթոդի ընտրությունը դյուրին գործ չէ և պահանջում է գիտակցված մոտեցում: Մեթոդների զուտ մեխանիկական ընտրությունը կհանգեցնի ուսումնական գործընթացի կարծրացմանը, կկասեցնի և՛ ուսուցչի, և՛ աշակերտի ստեղծագործական ակտիվությունը:

Աշխարհագրության ուսուցման մեթոդի ընտրությունը մեծապես պայմանավորված է նյութի աշխարհագրական բովանդակությունը, և դրա ընտրության հարցում կամայականություն լինել չի կարող: Մեթոդի ընտրության վրա ազդող գործոն են հանդիսանում աշակերտների իմացական հնարավորությունները, աշխարհագրության կաբինետում գիտելիքի ստացման այս կամ այն աղբյուրի առկայությունը, ուսումնասիրվող երևույթի բնույթը: Ինչպե՞ս ընտրել բովանդակությանը համապատասխան ուսուցման մեթոդ: Մ.Կ. Կովալևսկայան առաջարկել է գիտական հասկացությունների ձևավորման մեթոդիկա, որը հաշվի է առնում նրանց բովանդակության տրամաբանագնոսեոլոգիական (իմացաբանական) էությունը: Օրինակ՝ որոշ հասկացություններ արտացոլում են՝

- տեղեկությունների օբյեկտի վերաբերյալ՝ տեղանքի աշխարհագրական դիրքը, բարձրությունը, հեռավորությունը օվկիանոսից և այլն, պետության տարածքը, բնակչության թիվը, պետական կարգը և այլն,
- որոշ հասկացություններ վերաբերում են օբյեկտի հատկություններին՝ մակերևույթի բնույթը, ափագծի կտրատվածությունը և այլն, ճանապարհացանցի խտությունը, թողունակությունը և այլն,
- կան հասկացություններ երևույթների կամ պրոցեսների վերաբերյալ՝ հողմահարում, գոլորշացում, բնակչության վերարտադրություն, տնտեսության ինտենսիվ և էքստենսիվ զարգացման ուղղությունները և այլն:

Ինքնին պարզ է դառնում, որ նման բազմաբնույթ հասկացությունները չեն կարող ձևավորվել նույն մեթոդներով, դրանցից յուրաքանչյուրը պահանջում է ձևավորման ուրույն մեթոդական մոտեցում:

Առանձնացվում են աշխարհագրական բովանդակության գիտելիքների խմբեր՝

1. գիտելիքներ աշխարհագրական օբյեկտների կամ երևույթների արտաքին տեսքի վերաբերյալ՝ լեռ, հարթավայր, անձրև և այլն:
2. գիտելիքներ տարածության մեջ աշխարհագրական օբյեկտների տեղաբաշխման մասին՝ միկրո, մեզո, մակրո դիրք,
3. գիտելիքներ հատկությունների վերաբերյալ՝ խոնավություն, բերքատվություն, տնտեսության ինտենսիվություն և այլն,
4. գիտելիքներ երևույթների մասին՝ հողմահարում, ջրի շրջապտույտ և այլն,
5. գիտելիքներ աշխարհագրական օբյեկտի կառուցվածքի մասին, օրինակ՝ երկրակեղևի կառուցվածքը,
6. գիտելիքներ աշխարհագրական օբյեկտների միջև եղած կապերի մասին, օրինակ՝ գետի ռեժիմի կախվածությունը կլիմայական պայմաններից:

Վերը նշվածի հիման վրա կարելի է պնդել, որ անհրաժեշտ է ընտրել մեթոդը կամ մեթոդական համակարգը գիտելիքի բավանդակությանը համապատասխան:

Աշխարհագրության ուսուցման մեթոդներից յուրաքանչյուրն ակտիվացնում են աշակերտի մտավոր գործունեության տարբեր տեսակները: Մեթոդներից որևէ մեկի բացառումը ուսումնադաստիարակչական գործընթացի անպայմանորեն կհանգեցնի նրա նպատակների և խնդիրների թերի իրականացմանը:

Ինչպես տեսնում ենք, ուսուցման մեթոդները սերտ կապված են դպրոցական աշխարագրության բովանդակության հետ և փոփոխվում են ժամանակի ընթացքում կապված դասընթացի նպատակի և բովանդակության փոփոխման հետ: Ուսուցման մեթոդի ընտրությունը մեծապես կախված է ուսումնասիրվող երևույթի էությունից ու նպատակից, սովորողի իմացական պահանջմունքից, աշխարհագրության կաբինետի տեխնիկական հնարավորություններից:

2.7 ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Աշակերտի ինքնուրույնության ապահովումը դասագործընթացում մեթոդների էական բնութագրիչներից մեկն է: Ժամանակակից մեթոդական գիտությունը մեծ տեղ է տալիս աշակերտի ինքնուրույն գործունեությունը և այս իմաստով կարևոր է տարբերակել «ինքնուրույն աշխատանք» և «աշակերտի ինքնուրույն գործունեություն» եզրույթները: Աշխարհագրության ուսուցման մեթոդիկայում ինքնուրույն աշխատանք ասելով հասկանում ենք ուսուցման կազմակերպման մի ձև, որի ընթացում աշակերտները առանց ուսուցչի միջամտության որոշակի ժամանակահատվածում կատարում են առաջադրանք, իսկ կատարման արդյունքները ենթարկվում է ստուգման ուսուցչի կողմից: Ինքնուրույն գործունեության էությունն այն է, որ աշակերտները ոչ միայն ինքնուրույն աշխատում են, այլև գիտակցում են սեփական գործունեության ու գործողությունների նպատակը, որոնք պետք է կատարեն ուսումնական խնդրի լուծման համար:

Ինքնուրույն գործունեության արդյունավետ կազմակերպման համար անհրաժեշտ է՝

զարգացնել մտածողության հայտնի բոլոր ձևերը՝ էմպիրիկ և տեսական, վերհիշական և ստեղծագործական, որոնք սերտ փոխկապակցված ու փոխպայմանավորված են միմյանցով: Դրանցից յուրաքանչյուրը կատարում է որոշակի գործառույթ ձևավորում է համապատասխան մեթոդով և իր ուրույն տեղն է գրավում սովորողի ինքնուրույն գործունեության կազմակերպման գործում, զարգացնել և կատարելագործել մտավոր գործողություն կատարելու կարողությունները՝ վերլուծություն, համադրություն, համեմատում, ընդհանրացում, դասակարգում, կարևորի և եկրորդականի առանձնացում և այլն: Այս կարողությունների ձևավորումը իրականացվում է պրոբլեմային ուսուցման պայմաններում:

Եզրակացություն

Մեթոդների զարգացման գլխավոր հիմնական ուղղությունը դրանց ներուժի առավելագույն օգտագործումն է սովորողների մտավոր գործնեության կազմակերպման համար: Դրան հասնելու համար անհրաժեշտ է աշակերտներին սովորեցնել տրամաբանական գործողությունների եղանակներին՝ վերլուծություն, համադրում, համեմատում, համակարգում, ընդհանրացում: Մեթոդներն անհրաժեշտ են որպեսզի աշակերտների մոտ ձևավորվեն հետևյալ կարողությունները՝ կատարել դատողություն, արտահայտել սեփական միտքը, պատմել դիտարկված երևույթների մասին, կիսվել տպավորություններով և այլն:

Աշխարհագրության ուսուցման մեթոդներից յուրաքանչյուրն ակտիվացնում են աշակերտի մտավոր գործունեության տարբեր տեսակները: Մեթոդներից որևէ մեկի բացառումը ուսումնադաստիարակչական գործընթացի անպայմանորեն կհանգեցնի նրա նպատակների և խնդիրների թերի իրականացմանը:

Ինչպես տեսնում ենք, ուսուցման մեթոդները սերտ կապված են դպրոցական աշխարագրության բովանդակության հետ և փոփոխվում են ժամանակի ընթացքում կապված դասընթացի նպատակի և բովանդակության փոփոխման հետ: Ուսուցման մեթոդի ընտրությունը մեծապես կախված է ուսումնասիրվող երևույթի էությունից ու նպատակից, սովորողի իմացական պահանջմունքից, աշխարհագրության կաբինետի տեխնիկական հնարավորություններից:

Գրականության ցանկ

Մինասյան Ա., «Աշխարհագրության ուսուցման մեթոդիկա» ուսումնական ձեռնարկ, Երևան, 2013 թ.: 2. Մինասյան Ա.,«Աշխարհագրության ուսուցման մեթոդներն ու միջոցները» ուսումնական ձեռնարկ, Երևան, 2011 թ.: 3. Սարգսյան Խ. Բ.,Աշխարհագրության դասավանդման մեթոդիկա, «Զանգակ-97», Երևան, 2002 թ.: 4. Сушкова О.Ю. Методика обучения география. М., 2009 г.. 5. Петрова Е., Теория и методика обучения географии, Томск. 2010 г..